10.53587/25792865-2023.9-9

ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Չարչյան Ա.Գ., Սահակյան Ս.Ս., Մարտիրոսյան Տ.Ռ.

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան,
Երևան, Հայաստան

Հոդվածում վերլուծվել են ռազմաբժշկական հանձնաժողովների աշխատանքների կազմակերպման խնդիրները, որպես բժշկական գործունեության տեսակ՝ ռազմաբժշկական փորձաքննության լիցենզավորման համալիր միջոցառումների անհրաժեշտության լույսի ներքո:

Վերլուծվել են ռազմաբժշկական փորձաքննության լիցենզավորման հայեցակարգը կանոնակարգող հիմնական օրենսդրական ու իրավական ակտերը: Ներկայացվել են ՀՀ ժամանակակից պայմաններում ռազմաբժշկական փորձաքննության գործունեության առանձնահատկությունները:

Բանալի բառեր. *ռազմաբժշկական փորձաքննություն, բժշկական գործունեության լիցենզավորում, զորակոչային հանձնաժողով, բժշկական օգնության որակ:*

Հայաստանի Հանրապետությունում հատուկ ուշադրության է արժանի վերջին տարիներին զորակոչի ենթակա քաղաքացիների մեծ մասի առողջական և ֆիզիկական զարգացման ցուցանիշների նվազումը:

Հարկ է նշել, որ քաղաքացիների զինվորական ծառայության պատրաստման համակարգը, որը ներառում է բժշկական ապահովման և առողջական վիճակի կապակցությամբ զինվորական ծառայության պիտանիության որոշման պարտադիր տարրեր, բոլոր երկրներում էլ առկա է այս կամ այն տեսքով: Այս համատեքստում հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ Հայաստանի Հանրապետությունում զինված ուժերի համալրմանը մասնակցում են ՀՀ տարբեր գերատեսչություններ՝ ԿԳՄՍ, պաշտպանության և առողջապահության նախարարությունները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները [1]:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության զինվորական ծառայության համար քաղաքացիների պատրաստման համակարգը խճճված կառույց է , որտեղ հաճախ միմյանց կրկնօրինակում են տարբեր նախարարությունների և գերատեսչությունների գործառույթները, ինչը հանգեցնում է բյուջետային ֆինանսավորման հետ կապված մեծ ծախսերի:

Ինչպես վկայում են մեր կողմից կատարված ուսումնասիրությունները՝ քաղաքացիների կողմից տարբեր ռազմաբժշկական հանձնաժողովների կայացված որոշումները բողոքարկելու հիմնական պատճառները՝ խմբավորված ըստ հիմնական հատկանիշների հետևյալն են.

Թղթակցական հասցեն՝ Սահակյան Սամվել Սուրենի, բժշկական գիտությունների թեկնածու, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռազմաբժշկական փորձաքննության դասավանդման խմբի ղեկավար, 0025, Հայաստան, Երևան, Կորյունի փ., 2, (+374) 93-76-44-80, e-mail: drssahakyan@mail.ru,

- ռազմաբժշկական փորձաքննության անցկացումը օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի կոպիտ խախտումներով,
- բուն փորձաքննության ցածր որակը՝ պատշաճ հետազոտության բացակայությունը,
- հանձնաժողովի ոչ լիարժեք կազմով փորձաքննության կատարումը,
- ռազմաբժշկական փորձաքննության նպատակով բժշկական գործունեության իրականացման լիցենզիա չունեցող կազմակերպությունում հետազոտումը,
- բժիշկ-մասնագետների ոչ բավարար որակավորումը և այլն [2]:

Իրավիճակն առավել քննարկելի է նաև այն պատճառով, որ ռազմաբժշկական փորձաքննությունն իրականացվում է ոչ միայն ՀՀ զինված ուժերում, այլև ՀՀ ներքին գործերի նախարարությունում, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում, և մի շարք այլ մարմիններում: Վերոշարադրյալը հաշվի առնելով, և այս առումով քաղաքացիներին զինվորական ծառայության նախապատրաստելու համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով մեր տեսանկյունից, արդիական է դառնում զորակոչի ենթակա անձանց բժշկական զննության որակի բարձրացման հարցերը:

Ներկայումս ՀՀ-ում հետպատերազմյան ստեղծված իրավիճակի թելադրանքով հատկապես աճում է ռազմաբժշկական փորձաքննության մարմինների լիցենզավորման անհրաժեշտությունը:

Սույն հոդվածում փորձ է արվել ուսումնասիրել ՀՀ ռազմաբժշկական փորձաքննական մարմինների առկա վիճակը, ռազմաբժշկական փորձաքննության անցկացման գործընթացը, վերջինիս որակի վատթարացման հիմնական պատճառները, ինչպես նաև փորձաքննության գործընթացն օպտիմալացնելու հետ կապված միջոցառումների հիմնավորումը:

Առաջին հերթին անհրաժեշտ է նկատել, որ ռազմաբժշկական փորձաքննությունը Հայաստանի Հանրապետությունում կանոնակարգվում է հետևյալ օրենսդրական և իրավական փաստաթղթերով՝

- ՀՕ-42, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ Օրենքը, ընդունված՝ 1996 թվականի մարտի 4-ին (խմբ. 06.05.20 ՀՕ-268-Ն),
- ՀՕ-195-Ն, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ Օրենքը, ընդունված՝ 2017թվականի նոյեմբերի 15-ին,
- ՀՀ կառավարության որոշում «Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության կարգը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները, դրանց գործունեության, ինչպես նաև հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը, փորձաքննության եզրակացությունների ձևերը …», N 405ՈՆ, հավելված 1, ընդունված՝ 2018 թվականի ապրիլի 12-ին (խմբագրված 2022 թվականի դեկտեմբերի 22-ին, N 2016-Ն):

Այսուհանդերձ, վերոհիշյալ օրենսդրական փաստաթղթերում քննարկվող խնդրի վերաբերյալ տրված են մի շարք սահմանումներ, որոնցից, մեր կարծիքով, հիմնականները ստորև թվարկվածներն են.

- «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բժշկական փորձաքննության տեսակները, դրանք են

1) ժամանակավոր անաշխատունակության,
2) բժշկասոցիալական,
3) ռազմաբժշկական,
4) դատաբժշկական,
5) դատահոգեբուժական,
6) դատաթմրաբանական,
7) թունաքիմիական:

- Նույն հոդվածի 4-րդ կետը սահմանում է ռազմաբժշկական փորձաքննության էությունը. ռազմաբժշկական փորձաքննությունը անձիմզինվորական ծառայության պիտանիության կամ զինծառայողների կամ զինվորական ծառայությունից արձակվածների մոտ առկա հիվանդությունների կամ վնասվածքների՝ զինվորական ծառայության հետ պատճառահետևանքային կապի՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշումն է:

- 1-ին հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը սահմանում է «բժշկական օգնություն և սպասարկում» հասկացությունը: Այն նշանակում է՝ բնակչությանը խորհրդատվական, կանխարգելիչ, բուժական, պալիատիվ, դեղորայքային օգնության ցուցաբերում, ախտորոշիչ հետազոտությունների, վերականգնողական բուժման, բժշկական փորձաքննության անցկացում, հարբժշկական և ոչ բուժական բնույթի ծառայությունների մատուցում:

- 1-ին հոդվածի 1-ին կետի 11-րդ ենթակետը սահմանում է «բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող» հասկացությունը. օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված, բժշկական օգնության և սպասարկման որոշակի տեսակ կամ տեսակներ իրականացնող անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ՝ անկախ կազմակերպական-իրավական ձևից, սեփականության ձևից, կամ պետական կամ համայնքային հիմնարկ:

- Նույն հոդվածի 1-ին կետի 27 ենթակետը սահմանում է «բժշկական օգնության և սպասարկման որակի շարունակական բարելավում» հասկացությունը՝ առողջապահության բնագավառում ներկազմակերպական (բժշկական հաստատության ներսում) և արտակազմակերպական (մարզային, ազգային) մակարդակներում բժշկական օգնության և սպասարկման երեք հիմնական բաղադրիչի՝ կառուցվածքի, գործընթացի և արդյունքի համալիր գնահատման և բարելավման անընդհատությունն ապահովող գործընթաց, որն իրականացվում է լիազոր մարմնի սահմանած կարգով:

- 4-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է բժշկական օգնության և սպասարկման իրականացման առանձնահատկություններն արտակարգ իրավիճակներում արտակարգ իրավիճակներում կամ արտակարգ իրավիճակով պայմանավորված արտակարգ դրություն հայտարարելու դեպքում բնակչության բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացնելու նպատակով Կառավարության որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով կարող է թույլատրվել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից իրենց լիցենզիայով չնախատեսված տեսակի (տեսակների) բժշկական օգնության և սպասարկման իրականացում:

- 21-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է զինծառայողների և զորակոչային ու նախազորակոչային տարիքի քաղաքացիների բժշկական օգնություն և սպասարկում

ստանալու իրավունքը. զինծառայողները և զորակոչային ու նախազորակոչային տարիքի քաղաքացիներն իրավունք ունեն ստանալու բժշկական օգնություն և սպասարկում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

- 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն բժշկական օգնության և սպասարկման ծառայությունները մատուցում են համապատասխան լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը և դրանք դասակարգվում են ըստ բժշկական օգնության և սպասարկման տեսակների, պայմանների և ձևերի:
- Նույն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին կետ համաձայն Հայաստանի Հանրապետությունում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներն իրավունք ունեն ցուցաբերելու համապատասխան բժշկական օգնություն և սպասարկում լիցենզավորված տեսակների շրջանակներում համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:

Ինչ վերաբերում է ռազմաբժշկական փորձաքննության իրականացմանը, ապա հարկ ենք համարում ստորև ներկայացնել իրավասու հանձնաժողովների առջև դրված հետևյալ խնդիրները [3].

1) զինվորական հաշվառման, զորակոչի (ներառյալ զորահավաքային զորակոչի), զինվորական (կամ հավասարեցված) ծառայության անցնելու, պահեստազորային պատրաստության շրջանակներում պարտականությունների կատարման ժամանակ քաղաքացիների զինվորական ծառայության պիտանիության որոշումը,

2) սպայական և ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողների, ՌՈՒՀ-երի դիմորդների, կուրսանտների և ունկնդիրների, պարտադիր և պայմանագրային զինծառայության շարքային կազմերի, զինվորական ծառայության պիտանիության որոշումը,

3) ռադիոակտիվ նյութերով, իոնացնող ճառագայթման այլ աղբյուրներով, հրթիռային վառելիքի բաղադրամասերով, էլեկտրամագնիսական դաշտ ստեղծող սարքավորումներով աշխատելու համար անձանց պիտանիության որոշումը,

4) զինծառայողների, ՀՀ սահմանների պաշտպանությանը մասնակցած անձանց ստացած վնասվածքների և հիվանդությունների՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապի սահմանումը,

5) Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների, ԽՍՀՄ նախկին զինծառայողների, Չեռնոբիլի ատոմակայանի վթարի հետևանքների վերացման մասնակիցների ստացած վնասվածքների և հիվանդությունների հետևանքների՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապի հաստատումը [4]:

Ընդհանուր առմամբ, ռազմաբժշկական փորձաքննության գործընթացը բաղկացած է երկու կարևոր բաղկացուցիչ մասերից՝ առողջական վիճակի հետազոտում և բուն ռազմաբժշկական փորձաքննության իրականացում [5]:

Ինչ վերաբերում է առողջական վիճակի հետազոտությանը, ապա վերջինս կատարվում է մի շարք ախտորոշիչ միջոցառումների միջոցով, որոնք իրականացվում են քաղաքացու գանգատների հավաքման և վերլուծության, անձնական գործի, հիվանդության պատմության ուսումնասիրության, լաբորատոր, գործիքային, այլ հետազոտությունների իրականացման և գնահատման միջոցով:

Իրականացվող առկա ռազմաբժշկական փորձաքննության հետ կապված, հարկ նշել, որ վերջինս քաղաքացու առողջական վիճակի և ֆիզիկական զարգացման աստիճանի ուսումնասիրությունն ու գնահատումն է փորձաքննության պահին [5]:

Ռազմաբժշկական փորձաքննության նպատակն է զինված ուժերի համալրումը առողջ անձնակազմով [5], որի համար որոշվում է զինվորական ծառայության համար քաղաքացու պիտանիությունը և ՀՀ օրենսդրական և իրավական ակտերով նախատեսված այլ հարցեր, հաշվի առնելով նախկինում անցկացված հետազոտության արդյունքները, որոնց վերաբերյալ տրվում է գրավոր եզրակացություն:

Գործնականում քաղաքացիների հետազոտությունները կատարվում են ռազմաբժշկական փորձաքննական հանձնաժողովներում ընդգրկված բժիշկ-մասնագետները, թերապևտը, սրտաբանը, վիրաբույժը, վնասվածքաբանը, նյարդաբանը, հոգեբույժը, ակնաբույժը, օտոլարինգոլոգը, մաշկաբանը [4]:

Քաղաքացու բժշկական փորձաքննության արդյունքներով տրվում է քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն, որն, ըստ մշակված կարգի, կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից: Եզրակացությունն առնվազն ներառում է քաղաքացու առողջական վիճակի ամփոփ նկարագրությունը, քաղաքացու պիտանիության աստիճանը զինվորական ծառայությանը, նրա առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները, եզրակացության բողոքարկման կարգն ու ժամկետները [4]: Քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացության մեջ, կախված զինվորական ծառայությանը քաղաքացու պիտանիության աստիճանից և բժշկական փորձաքննության նպատակից, նշվում են՝

1) պիտանի է զինվորական ծառայության համար,
2) պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար,
3) սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար,
4) ժամանակավորապես ոչ պիտանի է զինվորական ծառայության համար,
5) ոչ պիտանի է զինվորական ծառայության համար,
6) ոչ պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար,
7) կարիք ունի բուժման,
8) ենթակա է կանչվելու վարժական հավաքի,
9) ենթակա չէ կանչվելու վարժական հավաքի [4]:

Բժշկական գործունեության լիցենզավորման կարգը կանոնակարգող հիմնական փաստաթղթերն են՝

• « Լիցենզավորման մասին» ՀՀ Օրենքը(ՀՕ-193), ընդունված՝ 2001 թվականի մայիսի 30-ին,
• ՀՀ կառավարության որոշումը «Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության, դեղատնային գործունեության, կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման, դեղերի մեծածախ իրացման լիցենզավորման կարգերը և նշված գործունեությունների իրականացման լիցենզիայի ձևերը հաստատելու մասին», N 867, ընդունված 2002 թվականի հունիսի 29-ին:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում սահմանված են՝

- «լիցենզիա» հասկացությունը, որը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն է, ինչպես նաև այդ իրավունքը հաստատող պաշտոնական փաստաթուղթ,
- «լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ» հասկացությունը գործունեության տեսակ, որի իրականացման համար օրենքով պահանջվում է լիցենզիա:

Նույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետում ներկայացված են լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակը, որտեղ նշված է նաև առողջապահության բնագավառը, մասնավորապես՝ բժշկական օգնության և սպասարկման իրականացումը:

Ի դեպ, Հայաստանի Հանրապետության կառավորության 2002 թվականի հունիսի 29-ի N 867-Ն որոշմամբ սահմանվում է ՀՀ առողջապահության բնագավառում կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների: Նշված լիցենզավորման կարգում, մասնավորապես՝ կարևոր նախապայման է նշվում առողջապահության բնագավառում տվյալ գործունեության համար անհրաժեշտ համապատասխան մասնագիտական կրթություն ունեցող կադրերով (համապատասխան բարձրագույն մասնագիտական կրթության վկայագրի (դիպլոմ), հետբուհական կրթության վկայականների պատճենները) և բժշկական սարքավորումներով ապահովվածության մասին պահանջը:

Խիստ կարևորվում է աշխատողի կրթության փաստը հավաստող փաստաթղթերը և վերջին 5 տարվա ընթացքում համապատասխան վերապատրաստման փաստը հավաստող վկայականը, ինչպես նաև տեխնիկական և գույքային հագեցվածությունը [6]:

Բացի վերը նշված պահանջներից, ըստ մեր ըմբռնման, ռազմաբժշկական փորձաքննության անցկացման ժամանակ անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարության կողմից սահմանված բժշկական օգնության կարգը (ստանդարտները):

Հարկ է նաև ուշադրություն հրավիրել նաև այն դրույթին, որ վերը նշված օրենսդրական ակտերի պահանջների չկատարումը, բժշկական օգնության և սպասարկման անցկացումը լիցենզավորման պահանջների կոպիտ խախտմամբ, հանգեցնում են իրավական հետևանքների: Նշված կարգի համաձայն.

- Կոպիտ խախտում՝ կոպիտ է համարվում այն խախտումը, որի հետևանքով՝

- այլ անձանց հասցվել է նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով վնաս,
- անձի առողջությանը պատճառվել է թեթև կամ նվազ ծանր վնաս:

- Պարբերաբար խախտում է համարվում այն խախտումը, որի կատարման համար լիցենզավորված անձը մեկ տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ գրավոր նախազգուշացվել է, և որի չկատարումը կարող էր պատճառել թեթև կամ նվազ ծանր վնաս,
- Չարամտորեն է համարվում այն խախտումը, որը շարունակվել է կատարվել լիցենզավորող մարմնի գրավոր զգուշացումից հետո, և որի չկատարումը կարող էր ծանր վնաս հասցնել,
- Ծանր վնաս է համարվում այն վնասը, որը՝

- նվազ ծանր վնաս է պատճառել երկու կամ ավելի անձանց առողջությանը,

- ծանր վնաս է պատճառել անձի առողջությանը,
- առաջացրել է մարդու մահ,
- այլ անձանց հասցրել է նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափը գերազանցող վնաս [7]:

Հետևաբար, քանի որ **բժշկական օգնություն և սպասարկում հասկացությունը նաև** բժշկական փորձաքննության անցկացումն է , իսկ բժշկական օգնության և սպասարկման իրականացումը ներկայացված է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակում [8], նաև ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնելու համար անհրաժեշտ են՝

1. հանձնաժողովներում ընդգրկված համապատասխան մասնագիտական և իրավական գիտելիքներով օժտված բժիշկ - մասնագետներ, որոնք պարբերաբար պետք է վերապատրաստվեն [6],
2. համապատասխան տեխնիկական և գույքային հագեցվածություն [6]:

Հետևաբար այս ամենը պարտադիր պայման դարձնելու, ինչպես նաև վերահսկելու նպատակով հեղինակները խիստ կարևորում են ռազմաբժշկական փորձաքննության մարմինների լիցենզավորումը:

Ավելացնենք նաև, որ այդ դեպքում նաև հնարավոր կլինի անկախ ռազմաբժշկական փորձաքննական մարմին ունենալ, որը կնպաստի ռազմաբժշկական փորձաքննության որակի բարձրացմանը: Եվ հարկ է ընդգծել, որ այս դեպքում նաև արդիական կդառնա ՀՀ առողջապահության նախարարության կողմից ռազմաբժշկական փորձաքննության անցկացման միասնական և համապարփակ ստանդարտի (կարգի) մշակումը:

Գրականության ցանկ

1. Գալստյան Ս.Գ., Սահակյան Ս.Ս., Նազարյան Ա.Վ., Ծատուրյան Վ.Վ., Մարտիրոսյան ՏՌ, Զինված ուժերի համալրման և ռազմաբժշկական փորձաքննության դերի ու նշանակության հարցի շուրջ // Հայկական բանակ , 2021, 3 (109):
2. Trushin A.P., Lunin A.P., ArsentLyev A.G. About some problematic issues of medical examination of the citizens staying in an inventory, and their decision according to regulations of the current legislation. Pravo v Vooruzhennykh Silakh. 2013; (10):
3. « Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՀ օրենք՝ № ՀՕ-195-Ն:
4. ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի № 405-Ն որոշում «Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության կարգը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները, դրանց գործունեության, ինչպես նաև հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը, փորձաքննության եզրակացությունների ձևերը», հավելված 1, (խմբագրված 2022 թվականի դեկտեմբերի 22-ին, № 2016-Ն):
5. Մուրադյան Ա Ա , Գալստյան Ս Գ , Սահակյան Ս Ս , Ավետիսյան Գ Ա , Մարտիրոսյան Տ Ռ , Ռազմաբժշկական փորձաքննություն, հատոր I, ռազմաբժշկական փորձաքննության հիմունքներ, ուսումնական ձեռնարկ, ԵՊԲՀ, ՀՀ ՊՆ հրատարակչություն, 2022:

6. http://parliament.am/drafts.php?sel=onagenda&show_committee=111220&lang=arm, «Լիցենզավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին:
7. « Լիցենզավորման մասին» 2001 թվականի մայիսի 30-ի ՀՀ օրենք՝ ՀՕ-193:
8. « Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՀ օրենք՝ ՀՕ-42:
9. ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի № 867-Ն որոշում «Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության, դեղատնային գործունեության, կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման, դեղերի մեծածախ իրացման լիցենզավորման կարգերը և նշված գործունեությունների իրականացման լիցենզիայի ձևերը հաստատելու մասին»:

О НЕОБХОДИМОСТИ ЛИЦЕНЗИРОВАНИЯ ВОЕННО-ВРАЧЕБНОЙ ЭКСПЕРТИЗЫ

Чарчян А.Г., Саакян С. С., Мартиросян Т. Р.

В статье проанализирована проблематика организации работы военно врачебных комиссий как вида медицинской деятельности в контексте необходимости осуществления комплексных мероприятий по лицензированию военно-врачебной экспертизы.

Основное содержание исследования составляет анализ основных законодательных и правовых актов, регламентирующих концепцию лицензирования военно-медицинской экспертизы. Значительное внимание уделяется особенностям военно-врачебной экспертизы в современных условиях Республики Армения.

Ключевые слова: *военно-врачебная экспертиза, лицензирование медицинской деятельности, призывная комиссия, качество медицинской помощи.*

ON THE NEED FOR LICENSING OF MILITARY MEDICAL EXPERTISE

Charchyan A., Sahakyna S., Martirosyan T.

The article analyzes the problems of organizing the work of military medical commissions as a type of medical activity in the light of the need for comprehensive measures for licensing military medical expertise.

The main legislative and legal acts regulating the concept of licensing of Military Medical expertise were analyzed. The features of military medical examination in modern conditions of the Republic of Armenia are presented

Keywords*: military medical examination, licensing of medical activities, draft commission, quality of medical care.*

Ներկայացվել է խմբագրության 06.04.2023
Ընդունվել է տպագրության 17.05.2023